



Մա՛յր, որքա՛ն թանկ ու անգին էակ,  
 Որքա՛ն բարի ու հարազատ անձ,  
 Որքա՛ն գեղեցիկ ու աննման վարդ,  
 Մա՛յր, դուն իմ օղն ու ջուրն ես,  
 Մեր տան համն ու բոյրն ես,  
 Հպարտ եմ որ ունիմ,  
 Քեզի նման քաղցր մայր:

\*\*\*\*\*

Իմ ուսուցիչ սիրելի՛,  
 Համբերատար ու բարի  
 Սիրալիր ու եռանդուն  
 Ժպիտոք քաղցր, զուարթուն,  
 Ամեն օր ես քեզմով  
 Կը գինուիմ նոր գիտելիքներով  
 Հոգատար մօրս պես,  
 Քեզի բիւր յարգաք ու անհուն սեր:

**ԱՆԳԻՆ ՄԱՅՐԵՐ ԵՒ  
 ՍԻՐԵԼԻ՝ ՈՒՍՈՒՑՉՈՒՅԻՆԵՐ  
 ՁԵՐ ՏՕՆԸ ՇՆՈՐՀԱՒՈՐ ԸԼԼԱՅ**



ճիշդ կամ սխալ պատասխաններով իր մասնակցությունը կը բերեր վարժություններուն լուծման:

Ուսուցչուհին նկատած էր Հրակին փոփոխությունը եւ զինք քաջալերելու համար յաճախ անունը կու տար:

- Նայինք Հրակ ի՞նչ պիտի պատասխանէ:
- Հրակ, հասկցա՞ր վարժությունը:

Անհանդարտ տղան աչալուրջ դասին հետեւող, կարգապահ աշակերտ մը դարձած էր:

Ամսուան վերջին օրը տիպար աշակերտ ընտրելու օր էր:

Դասընկերները Հրակը առաջարկեցին, իբրեւ այդ ամսուան տիպար աշակերտ: Դաստիարակուհին դասատու ուսուցչուհիներուն հետ խորհրդակցելէ ետք Հրակին անունն ու պատկերը տեղադրեց ցուցատախտակին վրայ:

Հրակ ամպին բարձրացաւ, ընկերները միահամուռ ծափահարեցին իսկ ուսուցչուհին համբուրեց զինք: Անսահման ուրախ էր, անոր աչքերը կը փայլէին: Ան անկարգապահ աշակերտ չէր այլեւս, այլ՝ տիպար:

Տիպար աշակերտի կոչումին արժանի մնաց Հրակ: Վարք ու բարքին հետ նիշերն ալ բարելաւուեցան:

Հրակ իր ընթացքը փոխելով դարձաւ բոլորին սիրելի ընկեր, աշխատասեր աշակերտ ու հնազանդ զաւակ իր ծնողքին:

(շար. 2 եւ վերջ)



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ  
 ՆԿԱՐԱԶԱՐՈՒԵՑ՝ ՈԱՖՖԻ ՔԵՇՈՒՇԵԱՆ

## ԱԶԳ. ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱԳՈՒԿՆԵՐՍ ԿԸ ԳՐԵՆ

### ԳԱՐՆԱՆ ՕՐԵՐ

Ահաւասիկ եկաւ գարունը, վերանորոգեց բնութիւնը, ծառերը դարձեալ հագուեցան իրենց կանաչ տերեւները, ծաղիկները ծաղկեցան եւ պարտեզները զարդարուեցան գեղեցիկ գոյներով: Զմրան ամպերը անհետացան եւ երկինքին սիրուն, կապոյտ գոյնը վերադարձաւ: Այսպիսով, բնութիւնը կը նմանի սքանչելի թագուհիի մը, որուն թագը կը կազմեն վերադարձած, գաղթող թռչունները: Գարնան այս գեղեցիկ բնութիւնը տրամադրութիւնս կը փոխէ: Հոգւոյս մէջ նոր յոյս կը պլպլայ: Սակայն իմ նախասիրած եղանակս ամառն է, որովհետեւ դպրոցի տքնաջան աշխատանքէն ետք հանգիստի պէտք կ'ունենանք վերանորոգելու մեր եռանդը ու նոր թափով վերսկսելու ուսումնական տարեշրջանը:

Արէն Խրոյեան  
Է. կարգ

### ԳԱՐՈՒՆ

Գարնան թռչունները իրենց տաքուկ բոյները կը վերադառնան եւ ամեն առաւօտ քնքուշ ձայնով մեզ կ'արթնցեն, դպրոցի ճամբան աւելի հաճելի կը թուի, ծառերը իրենց կանաչ հագուստը կը հագնին, պարտեզները կարծես գծուած գեղեցիկ պատկեր մը կ'ըլլան, թիթեռները ծաղիկէ-ծաղիկ կը թռչկոտին: Գարնան առաջին ամիսը կը սկսինք ուրախ առիթներով՝ մայրերու եւ ուսուցչաց տօներով: Իմ նախասիրած եղանակը ձմեռն է, որովհետեւ ձմրան մեզի կ'այցելէ նուերներով ծանրաբեռնուած շատ սիրելի անձ մը՝ Կաղանդ Պապան: Ուստի նոր յոյսերով կը դիմաւորենք Նոր Տարին:

Թիթառ Աղազարեան  
Է. կարգ

### ԳԱՐՆԱՆ ՀՐԱՇՎԼԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Գարնան տրամադրութիւնս կը բարձրանայ, որովհետեւ ծաղիկները նոր կեանք կը ստանան, թիթեռներն ու թռչունները կը բարեւեն վարդերուն: Օրը կը սկսի արեւին լուսաշող ճառագայթներով: Գարունը նախասիրած եղանակս է, որովհետեւ ծիծեռնակը կը վերադառնայ եւ մեծ հաճոյքով կը շինէ իր բոյնը: Գարնան բնութիւնը հիանալի է, կարծես, թէ կ'ապրիմ այնպիսի գեղեցիկ պարտեզի մը մէջ, ուր կը տիրէ խաղաղութիւն, սեր ու համերաշխութիւն:

Բարի՛ եկար դուն, սիրո՛ւն գարուն:

Մարի Ռոզ Քեօշկերեան  
Է. կարգ

### ԳԱՐՈՒՆ

Տարուան չորս եղանակները կու գան ու կ'երթան, բայց ամեն մարդ անհամբեր կը սպասէ գարնան: Թռչունները կը վերադառնան իրենց բոյները եւ ծաղիկները կը ծաղկին: Գարունը մարդոց տրամադրութիւնը կը բարեփոխէ ու կեանք կը պարգեւ թէ՛ մեզ եւ թէ բնութեան:


Յակոբ Մոմճեան  
Է. կարգ



### Տան բաժանումներով խաչքառ

Փորձեցէ՛ք տրուած բառերը տեղաւորել խաչքառին մէջ:

- \* Հիւրասէնեակ
- \* Ննջարան
- \* Նստասէնեակ
- \* Խոհանոց
- \* Բաղնիք
- \* Միջանցք



### Հոմանիշներ կրնա՞ս գտնել

Ձախ կողմի սիւնակի իւրաքանչիւր բառը միացուր աջ սիւնակի համապատասխան հոմանիշին:

իր	խոնարհ
լեռ	ծիւթ
խակ	առարկայ
ծամօն	ընդարձակ
լեղի	իրարանցում
հեզ	դառն
փափաք	տհաս
խենթ	սար
լայն	իղձ
խուճապ	խելագար

### Բ կամ Փ

Ամբողջացուցէք բառերը, աւելցնելով պակասող բաղաձայնը:

- ոյն
- տա-ակ
- թամատ
- ադ
- որ-
- իղ
- եղկ
- անակ
- տու-
- այտ
- երդ
- ազմոց



# ՓԱՅԼԱԾՈՒ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ

Փայլածուն և Արուսեակը յարաբերաբար փոքր, բայց խտամարմին երկրանման մոլորակներ են: Փայլածուն արեւին ամենամօտիկ մոլորակն է:

## Փայլածու

Փայլածուն 4878 քմ. տրամագիծ մը ունի: Արեւէն 58 միլիոն քմ. հեռաւորութեան վրայ գտնուելով, 88 օր կը պահանջէ անոր շրջանը բոլորելու համար: Ամենէն արագ մոլորակն է: Դառնալով արեւին շուրջ, Փայլածուն նաեւ կը դառնայ ինքն իր վրայ 65 օրուան ընթացքին: Փայլածուին մէկ օրը քիչ մը աւելի երկար է քան երկրային 58 օրերը: Բազմաթիւ խոռոչներ պարունակող Փայլածուի մակերեսը կը յիշեցնէ լուսինը: Փայլածուի մթնոլորտը շատ ցած խտութիւն ունի, սա պատճառ կը դառնայ, որ ցերեկը հողին ջերմաստիճանը հասնի 450 աստիճան սելիսիուսի, ինչ որ լիովին բաւարար է կապար հալեցնելու համար: Մինչդեռ գիշերները շատ ցուրտ կ'ընեն հոն -180 աստիճան սելիսիուս: Ամերիկեան Մարինըր տիեզերաչափը զայն նկարած է 1974-ին և կրցած է ստուգել, որ ան կը պարունակէ լուսին մեծութեամբ կրակէ կորիզ մը:



## Արուսեակ

Արուսեակը, Փայլածունէն ետք, արեւին երկրորդ ամենէն մօտիկ մոլորակն է: Մեծութեամբ այնքան նման է երկրին (12.102 քմ.), որ յաճախ կը նկատուի անոր երկուորեակը: Արեւէն 108 միլիոն քմ. հեռաւորութեան վրայ գտնուելով, անոր շուրջ կը դառնայ 225 օրէն:

Ան ինքն իր վրայ կը դառնայ 243 օրէն, միւս մոլորակներու շարժումին հակառակ ուղղութեամբ: Արուսեակը, որ յաճախ կոչուած է «Յովիւին աստղ»ը, արեգակնային դրութեան ամենէն լուսաւոր մոլորակն է: Արուսեակը երբեմն կ'երեւի արեւմուտէն անմիջապէս ետք, իսկ երբեմն՝ արեւածագէն առաջ: Շրջապատուած է ամպային խիտ խաւով մը, որ գլխաւորաբար կազմուած է բնածխային կազէ:

Այս 100 քմ. թանձրութիւն ունեցող խաւը արեւի ջերմութեան կը թոյլատրէ թափանցել մինչեւ իր մակերեսը, սակայն չ'արտօսներ, որ կրկին վերադառնայ միջոց (ջերմանոցի ազդեցութիւն): Այդ պատճառով, արուսեակի հողին ջերմաստիճանը շուրջ 480 աստիճան սելիսիուս է:



# ՉԵՄ ՈՒՉԵՐ ԴՊՐՈՑ ԵՐԹԱԼ

Ռիթա Կաղեան-Տիքախբեան

Ուսումնական տարեշրջանի երկրորդ կիսամեակին դասատու ուսուցիչներէն մէկը ճամբորդեց.

- Հիմա կարգը այս նորեկ ուսուցչուհիին եկաւ,- մրթմըրթաց Հրակ:

Առաջին դասապահուն Հրակ փորձեց ամէն գնով նեղացնել ուսուցչուհիին:

Ուսուցչուհիին անվրդով մնաց, մեղմ ժպիտ մը կար դեմքին, ո՛չ բարկացաւ, ոչ ալ դասարանէն դուրս հանեց զինք: Հրակ չհասաւ իր նպատակին:

- Այս ի՞նչ տարօրինակ օրիորդ է, բարձրաձայն խօսեցայ ու խնդացի, շուրջիններուս նեղութիւն տուի, բայց ինք անտարբեր մնաց: Միակ ըրած բանը այն էր, որ աչքերուս նայեցաւ ու ժպտաց: Վաղը ձեռով մը կը նեղացնեմ զինք,- դժգոհեցաւ Հրակ:

Յաջորդ դասապահուն, երբ ուսուցչուհիին Կոմիտաս Վարդապետին մասին կը խօսեր, Հրակ յանկարծ սկսաւ երգել:

Բոլորը խնդացին:

- Ինչո՞ւ կը խնդաք, Հրակը քաղցր ձայն ունի եւ ըստ երեւոյթին կը սիրէ երգել: Տղա՛ս, վաղը Կոմիտասի մշակած երգերէն մէկը սորվե՛ ու երգե՛:

- Ես ո՛չ բաները գիտեմ, ոչ ալ եղանակը:

Չեմ ուզեր երգել, ընկերներս վրաս կը խնդան:

- Ո՛չ, չեն խնդար: Ես ալ հետդ կ'երգեմ եւ այսպիսով զուգերգ կը կատարենք:

Հրակին եւ ուսուցչուհիին զուգերգը գեղեցիկ էր: Ոչ ոք խնդաց, ընդհակառակը՝ ծափողջոյններու տարափը թնդացուց դասարանը:

Հրակ ուրախացաւ, բայց այս մէկը պատճառ չդարձաւ, որ Հրակ փոխէ իր որո-

շումը: Ամէն օր տան մէջ նոյն վիճաբանութիւնը կար:

- Ո՛չ դաս պիտի սորվիմ, ոչ ալ դպրոց պիտի երթամ, ես պիտի չուսանիմ,- կը կրկնէր ան:

Հրակ սուտ հիւանդ ձեւացնելով կըրցաւ մօրը համոզել եւ դպրոցէն բացակայեցաւ:

Ուսուցչուհիին դասարան մտաւ եւ նկատեց Հրակին բացակայութիւնը: Ընկերները յայտնեցին, որ ան առանց բանաւոր պատճառի յաճախ կը բացակայէր:

Հրակ երկու օր վերջ դպրոց վերադարձաւ:

- Հրա՛կ, ո՞ւր էիր, բացակայութիւնդ զգալի էր,- հարցուց ուսուցչուհիին:

«Բացակայութիւնդ զգալի էր» խօսքը հաճելի հնչեց Հրակին ականջին:

Ուրեմն ուսուցչուհիին մտահոգուած էր իր ներկայութիւնը, հակառակ անոր որ ինք ամէն ջանք թափած էր նեղացնելու ուսուցչուհիին:

Գոհունակութեան ժպիտ մը ուրուագծուեցաւ Հրակին դեմքին:

Հետզհետէ վարուելակերպը փոխուեցաւ: Այլեւս չէր նեղացներ ուսուցչուհիին: Առաջին գրասեղան տեղափոխուելով սկսաւ ուշիուշով դասաւանդութեան հետեւիլ,

